52. ԱՆԶԳԱՄ ԿԻՆ

Կէղնի, չէղնի, մարթ ու կնիկ մե կէղնի։ Էդ մարթու կնիկ սիրողութեն կէնե։

Կնիկ էն մեկ օր գելնա ու կէրթա ֆռոն, էդ կնկա էրիկը կտեսնա, ֆռոնչին կծեծե զէդ կնիկ, թը ինչի՞ անգրցար. էդտեխ ինչ կէնին՝ կէնին։ Կնիկը գելնա դուրս, իրիկ զկնիկ կծեծե էդտեխ, ֆռոնչին կհասկնա, գուգա ու կնկա հետ կէղնին մեկ ու զէդ մարթ կդրին գետին։

Ֆռոնչին կնկան կըսե.— Գնա դախլի վրավեն առ դանակ, արի, օր զէդ մարթ մորթինք։

Կնիկ կէրթա օր դանակ բերե։ Էդ մարթու շուն էդտեխ կանուկ կէղնի, կտեսնա օր ուր տերը շատ նեղ է, կթռնա ֆռոնչի վզին ու ֆռոնչին կդրե գետին։

Կնիկը կառնե դանակ գիգա։ Գիշեր կէղնի, զուր մարթն ու սիրական չճոկե իրարուց։ Բերե դանակ, կիտա իրկա ծեռ։ Իրիկ զֆռոնչին կմորթե։ Մարթ կմորթե կպրծի, կելնա կծեծե զուր կնիկ ու կառնե էրթա ուր տուն։

Էդ մարթուն լէ քառասուն արաբ կէղնի, ինք ուրին կրսե. «Ինչի մեկ անդամ զիմ կնիկ սպանիմ օր ազատվի, ապա ամեն օր խանչիմ արաբներ, թըխ ծեծին, փնչխին հարի օր մեռնի»։ Խանչեց ուր արաբներ, զէդ կնիկ ծեծեցին, ճնճխեցին, փնչխեցին թալին մեկ դեն։

Թազավորի ողիր օր մե գիգա էդ մարթուն խոնախ։ Հ՚իրիկուն

օր կէզնի, էդ մարթ կֆըշա գիգան քառսուն արար, զէդ կնիկ կծեծին կփնչխին էլման ու կդառնան էրթան։

Էդ ոզիր կտեսնա զէդ բան ու կըսե մարթուն.— Ըդրա գլխաց գալած պտի ընձի ըսիս, թե հ՚որի՞ զէդ կնիկ հըմլա կծեծիք։

Էդ մարթ կվերցու կըսե ոզիրին.— Քու ի՞նչ գործն է. դու խոնախ մարթմ իս, կիր հաց, խմե քու ճուր, պառկի, սաբախտան էլի գնա։

Ոզիր կըսե.— Չէ՛, ընձի պտի պատմիս։

Էդ մարթ ոզիրին կըսե.— Կտեսնա՞ս իդա կնիկ, թե օր կուզիս քըզի լէ իդմրլա ծեծին, փնչխին, կըսիմ, թե օր չուզիս՝ չըսիմ։

Կըսե.— Կուզիմ, ծեծվիմ, փնչխվիմ օր էդ խոսք հասկնամ։

Էդ մարթ ոզիրին ուր կնկա գլխաց գալած կպատմե։ Կֆշա, քառսուն արաբ գիգան զէդ ոզիր կծեծին, կփնչխին, կթալին մեկ դեն։

Էդ ոզիր գելնա էդ տեխեն, ուշիկ-ուշիկ կէրթա թագավորին խաբար դիտա, թե քու էրկրի մեշ էդրմլա բան մե կա։

Թագավոր գելնա կհադնի գերիշի շոր, նշաններ կկախե վրեն ու դիգա, գիգա էդ մարթուն կէզնի խոնախ։

Իրիկուն օր կէզնի, մարթ էլման կֆշա. օր կֆշա, էլման քառսուն արաբ գիգան, էլման զէդ կնիկ կծեծին, կփնչխին, կդառնան կէրթան։

Թագավոր կըսե էդ մարթուն.— Իդա ի՞նչ պատճառ է օր իգա խեզճ կնիկ էդրմլա կծեծին ու կփնչխին։

Էդ մարթ կվերցու, կըսե— Դևրիշ շան, քու ի՞նչ գործն է, դու խոնախ մարթմ իս, էկեր իս, կիր քու հաց, խմե քու ճուր, պառկի, սաբախտան էլի գնա։

Կըսե.— Չէ՛, պտի ընձի պատմիս։

Հար ինչ կենե դևրիշի ծեռեն չի պրծնա։

Կըսե.— Դևրիշ, կտեսնա՞ս իդա կնիկ, թե ուզիս իգա կնկա պես ծեծվիս ու փնչխվիս, կըսիմ. չէ օր չուզիս ծեծվել ու փնչխվել՝ չըսիմ։

Դևրիշ կըսե.— Կուզիմ ծեծվիլ ու փնչխվիլ օր էդ բան հասկընամ։

Էդ մարթ ուր գլխաց գալած կպատմե դևրիշին։

Էդտեխ կֆշա, էդ է պտի արաբներ իգան, դևրիշ ուր նշներ կցուցու։ Էդ մարթ կտեսնա օր էդ գևրիշ թագավորն է, կթոնա,

27—1086

գելնա հառեճ կկանի։ Արաբներ օր կտեսնան թը թագավորն է, էլ չի գան։

Սաբախտան թագավոր գելնա էրթա ուր դիվան, կխանչե ուր օնիքիլարներ ու կըսե.

— Ես պտի անուն էգեղեն իմ էրկրի մեջ չթողիմ, պտի հ'մեն կտրիմ։

Օնիքիլարներ իրեք սահաթ ոխթ գուզին։ Գընգնան քաղքի մեջ էնդեհեն կզարկվին, էն գեհեն կզարկվին, գուզին օր էգեղեն չկտրվի։ Կէրթան հալվոր մարթուց մե կհարցուն, թը թագավոր ըսեր է անուն էգեղեն՝ իմ էրկրի մեջ չթողիմ, հ'մեն պտի կտրիմ։

Հալվոր էն օնիքիլարներուն կըսե.— Գացեք թագավորի խեչ ու ընձի խանչեք, ես գիգամ թագավորի պատասխան գիտամ։

Էդ մարթիք կէրթան թագավորի խեչ, զէդ հալվոր կխանչին թագավորի խեչ։

Հալվոր գիգա թագավորի խեչ, թագավոր կհարցու.

— Հալվոր ջան, ինչի՞ ես էկի։

Հալվոր կըսե.— Ընձի հրաման տուր օր զրուցիմ։

Կըսե.— Քըզի հրաման։

Կըսե.— Թագավոր ապրած, եբ օր ես ջհել ենք, դեդուկներ ես զաֆթեր ենք, նա հողածին մարթ գընցնե, նա էլ ուրիշ բան, ինչ օր տեսնենք, իմ ձեռնեն փրստ չընցներ, զմեն կսպանենք։ Օրերուց մի օր մե ջահել ծիավոր մե էկավ, ընձի բարև չտվեց ու հ'ընցավ. ես էլ հերսոտա, առա իմ նետ ու ընգա ետև։ Հասա, էդ էր պտի զարգինք, էդ մարթ ծեռ թալեց իմ գլոխ, բռնեց ուր հ'ոռ ծիու վրավեն փանձրաց, գլուխըս դրեց ... տակ ու քշեց, քիչմ էդտեխ քշեց ու զիս թողեց։ Ես ընգած մանցի գետին. մեկ էլ էլա, մեկ լէ զարկենք, էլման բռնեց զիմ գլոխ դրեց... տակ ու քշեց։ Քշեց քիչ մե տեխ ու զիս թողեց, ես էլման ընգաց մացի գետին. տեսա օր էդ մարթու չկերնինք չարա էնինք, վաղի գացի հասա, ըսեցի. «Ո՞ւր կէրթաս, ես լէ գիգամ քու հետ, դու իմ ջոչ ախպեր, ես քու պզտիկ ախպեր»։

Ես ու էդ մարթ իրարու հետ գացինք. շատ գացինք, քիչ գացինք, շոչ հ'երի մը դուռ կանանք։ Էդ մարթ տկլոզցավ, կշտապընդավ ու ընձի ըսեց. «Ես կմտնամ իդա հ'երի մեջ, իրեք սահաթ օր թըմմավ, էլա, էլա, չէլա, կառնիս իմ շորեր քըզի, իմ ծին ու կէրթաս»։ Էդ մարթ մտավ հ'երի մեջ, մտավ թե չէ, գոռուն, ըոռուն, օրոդուն, էրկինք գետինք լցվավ, հաղ մե տեսա օր ամե ոտ գիգեր գերնի խըդեր, մե գլոխ գիդեր գոմշու մե խըդեր։

Իրեք սահաթ օր թըմմավ, էդ մարթ էլավ էդ հ'երից, արնի մեջ կորեր էր, ըսավ. «Ընձի քիչմ ճուր բիր օր լվացվիմ»։ Գացի քիչ մն ճուր բերի, էդ մարթ լվացվավ, հագավ ուր շորեր, հեծավ ուր ծին ու ընդավ իմ հ'առեճ ու էկանք։ Շատ էկանք, քիչ էկանք, ճամփու վրեն թաժա գերեզման մե կեր, ընձի ըսավ թե՝ «էս գերեզմանը քակի»։ Ես գերեզմանը քակեցի, հանեցի թաժա ջհել տղե մե։ Ըսեց. «Կտեսնա՞ս էդա տղեն». ըսեցի. «Հա՛, կտեսնամ»։ Ըսեց. «էդ տղեն օր կա՝ իմ նշանածն էր։ էն հ'եր օր ես մտա, էդ հ'երի դևեր իմ նշանած սպանած ին իմ ապով, ես էլ գացի իմ նշանածի հավեդ առա ու էկա։ Մկա ես զիս կսպանիմ ընձի ու իմ նշանած մեկ տեխ կդնիս, հողով կծածկիս, կառնիս զիմ ծին ու շորեր, կէրթաս քըղի»։

Էդ մարթ խանջալ հանեց, ուր սրտին զարկեց, ինք էլ մահացավ էն տեխ ուր նշանածի խեչ։ Ես լէ վերցուցի զէդ էրկուս, դրեցի գրփի մեջ, հող տվի վրեն, առա ծին ու զուր շորեր ու էկա։

Հալվոր էդըմլա պատմեց թագավորին զուր պատմութեն, վերջո ըսավ թագավորին։

— Թագավոր ապրած կենա, հ'մեն մարթ մեկ չէղնի, հ'եմեն կնիկ լէ մեկ չէղնի։ Մարթու մեջ վատ լէ կա, աղեկ լէ կա։

Թագավոր հրաման էնեց որ կնիկներ ազատին. մինակ թե վատ կնիկը խեղթեցին։